Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ» ՊՈԱԿ-ում «Մասնագիտություն (Քանոն)», «Մասնագիտություն (Դհոլ)», «Երաժշտության տեսություն» առարկաներ դասավանդող դասախոսի թափուր հաստիքների համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում (Ձև 1),
2. բարձրագույն մասնագիտական կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
7. այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
8. մեկ լուսանկար՝ 3x4 չափի:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թ. օգոստոսի 14-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից, Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջում, հասցեն՝ ք. Երևան, Ազատության 18:

Մրցույթը տեղի կունենա 2026 թ. օգոստոսի 24-ին Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջում՝

- «Մասնագիտություն (Քանոն)» ժամը՝ 11:00
- «Մասնագիտություն (Դհոլ)» ժամը՝ 13:00
- «Երաժշտության տեսություն» ժամը՝ 14:00:

Տեղեկությունների համար զանգահարել (+374) 91 781370 հեռախոսահամարով:

Էլեկտրոնային հասցե՝ babajanyancollege@yahoo.com: